դում տվին ինձ թէ Մի՛ ասեր մարդու. եւ ասին թէ եղիազար վարդապետն տաճկեր է ԺԸ տարոյ ի Հալապ. ահա՛ քեզի հիւճէթի մի, տա՛ր զայս հիւճաթի սուրբքին, առ և գնա՛ զայս Տաճկներուն իմացուր, որ չալլա տաճկըցնես[1]). թէ զայս բանս որ առնես, նա՛ տանք քեզ ձ ղուռուչ, Ա. տօնլուխ չուխա, Ա. տօնլուխ ղումաչ, Ա. փաչա սարըղլի, և ա՛ռ քեզ օգնական Աչյասօֆու Թէրզին և ձիհէնտէմն. և ես ի խղճմտանք եկայ, զայս բանս չարի: ես Մահմատ չաուշս զայս բանս գրել տվի ի հայ գիր որ մարդ տաճիկ չիմանայ. իսկի այս գիրս սուտ բան չկայ: Զայս թուղթս գտան և բերին, ցոյց տվին ամենեցուն և ես ինքնին կարդացի:

Եչի (24 Ապրիլ) առաւօտուս գնացի ի մեր ժամն և անտի ելեալ ի տուն և անտի ի խանութ: Եւ յետինքն կանչեալ էր եւ դեռ նստեալ կայաք ի խանութին, եկն թագաւորն եւ էանց թէպտիլ կերպարանաւ ի վերայ ձիոյ նստեալ Գ Դ մարդով և զկնի մի քարընկեց հեռի խաղնատար սեաւ (պաբաղ) ազան եւ մի անչափ հեռի՝ պօստանճիպաչին և խաւօտապաչին հետ իրաց և այլ զկնի մի ձի հէպիկէով՝ կերակուր էր կարծեմ, որ ելեալ ի պալատէն, ծովով գնացեալ ի Էյուպ սուլթանն, եւ ուխտ արարեալ և անտի ելեալ ձիով անցեալ ընդ Իսկի սարայովն և երթայ ընդ մէջ Խապանճոցն և ելանէ ընդ դռնով Սապոնճոցն և պտուտէ ընդ Տարափխանի առջևէն և գայ մտանէ ի չարսուն՝ Պէզէստէնի առջևովն, եւ ի Բէհատճինոցէն գայ մտանէ ի Տուլպէնտճոցն մէջն՝ ի Թահտախանի առջեւէն, եւ եկեալ ընդ առաջի մեր անցաւ եւ հայէր մի մի. եւ յորժամ մեք հայէաք՝ ինքն զերեան ի մի կողմն դարձուցանէր. այսպիսի ներքնագործ էր և իմաստուն, բայց ոչ կա-

1) տաճկնեցես.